


ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց Մ Ե Ծ Ա Ց



Ա Ն Ի

Ճանապարհ կալեալ 'ի քաղաքէն կարուց յարևելս հարաւոյ, ընդմիջելով զլայնածաւալ դաշտ քաղաքին, որ այն ինքն է գաւառն վանանդայ, ընթացեալ ժամս իբրու վեց և աւելի մինչև ցզոյգ բլուրսն Եաննիլիլի ասացեալ, որք սահման հատանեն ընդ վանանդ և ընդ Շիրակ, երևի 'ի հանդիպոյ յարևելից կուտ դաշտն Շիրակայ. և փոքր մի ևս յառաջ անցեալ ակներև լինին պարիսպքն Անոյ 'ի հեռաստանէ: Իսկ և յեզերս երկնից ակն արկանելով՝ նշմարին միանգամայն յարևելից եղջերաւորն Արագած սպիտակափառ գագաթամբքն, և 'ի հարաւոյ ալևորն Մասիս՝ ի մառախլապատ ամպոց քօղեալ երբեմն ցկէս բարձրութեանն, և երբեմն տեսիլ աշխարհի արարեալ զպատկեր դիմացն՝ զհաւորն և զպատկառելի: Յերից այտի ցանկալի տեսարանացդ Բագրատունեացն դաստակերտ կարի մօտևորութեամբն նախահրաւէր լինի որբացելոց որդւոցն. առ որ ուղևորեալ և մերձ եղեալ 'ի պարիսպն՝ յայլ յայլմէ լինի ոգի հայրենասիրի: Ի բարձ-


րութենէ պարսպացն, յահեղ հոյակապութենէ աշտարակացն և 'ի խնամստ փութոյ ազատածեռն մեծանձնութեան՝ որով այդ ամենայն հիմնեալ կանգնեցաւ առ հասարակ վիմօք կոփածոյիւք ողորկագունիւք, յուշ լինին նմա անդէն Աշտտեանքն և Սմբատեանքն աշխարհաշէն թաղաւորք: Մեծահռչակ դաստակերպքն Արշակունեաց՝ Վաղարշաւան, Արմաւիր, Վաղարշապատ և Երուանդայ ձեռակերտք՝ 'ի ծերութենէ ժամանակաց սպառեալ գրեաթէ անհետ եղին. և եթէ սակաւախօս ինչ բանք յայտարար կացցեն հանդիսի նոցա՝ այն ահա բաւական լինի վերջնոց դարուցս՝ մեծս և տիեզերակալս և աշխարհաշէնս կոչել զնոսա. սակայն տոհմին Բագրատունեաց մեծագործութիւնք առանց ուրուք վկայելոյ ինքնին պատմող լինին ամենեցուն թէ յոր սահման հասին, որ և ընդ ողջոյն գաւառն Շիրակայ ցիր և ցան սփռեալ կան ամենայն ուրեք, կեդրոն և գլուխ այդոցիկ ունելով զԱնի: Աւաղ, զի խանդացեալ դարուցն այնոցիկ չաւանդեցին 'ի մեր ձեռս գրաւոր նկարագրութիւնս ամենայն վայելչութեանցն Անուոյ որպիսի իղձ լինին հնասէրք ժամանակիս. զի նոքօք առաջնորդեալ 'ի նմա՝ ինքնին վայրքն անխօս վկայութեամբ մատնանիչ առնէին եթէ այս ինչ տեղի գահ է արքայական, և միւսն հայրապետանոց. այս նախարարազանց բնակարան, և այն խորհրդարան աւագանւոյն, և միւսն ճոխից զբօսարան. ո՛ր զայս և զայն ձեռակերտեաց և ո՛ր դարձեալ հրաշակերտիցն հազարաւոր եկեղեցեաց հիմն արկ: Չկարևորս զայստսիկ լռեալ 'ի մէջ առաջնոցն այնոցիկ՝ զայլոց իրաց ճառ արկեալ հրաշաբանեն, թէ լցեալ էր քաղաքն բազմամբոխ բիւրուք արանց և կանանց 'ի հիացումն տեսողաց, մինչև կարծել թէ մեծ մասն աշխարհիս Հայոց անդ իցէ: Այդպէս ոմն ըզխուռն ամբոխէն պատմէ, այլ ոք զեկեղեցեացն բազմութենէ, և այլ ոմն զօսկեձեղուն ապարանիցն: Չմնաց և ոչ մի յայդցանէ կանգուն զի գոնեայ յարձանագրութեանցն ծանօթ լինէաք. զի և այսոքիկ ոչ են բաւականք 'ի յագուրդ հետաքնին հնասիրաց: Ի բերանս ռամկին մանաւանդ հեռաւորաց ոմանց բազում աւելազանց բանիւք 'ի ճառ արկեալ է քաղաքս հանդերձ առասպելեօք. զոր ոչ գիտեմ ըստ արևելեայց սովորութեան բնաւորեալ իցեն անկարելեաց հաւատս ընծայել՝ եթէ 'ի տիեզերահռչակ անուանէ քաղաքին և յողոյ հայրենասիրութեան շարժեալ իղձ լինին թէ այնպէս լեալ իցէ. չածեալ զմտաւ՝ զի ամենայն որ ընդ տարերքք աշխարհիս է, հարկ է ժամանակաց փոփոխութեամբ եղծանիլ: Եւ ահա ականատես եղեալ մեր ամենայն վայրացն ստորագրեմք մի ըստ միոջէ, սկիզբն 'ի գրից քաղաքին արարեալ և 'ի սլարսպացն, և ապա անցեալ 'ի մէջն:

ԴԻՐՔ ՔԱՂԱՔԻՆ. — Արդ քաղաքն Անի ունի զնիստ իւր յեզր Ախուրեան գետոյ, որ զհարաւով նորա պատեալ՝ յարևելից յարևմուտս ընթանայ. հիւսիսակողմն քաղաքին միահետ հաւասար է յատակի լայնածաւալ դաշտին Շիրակայ, յարևելից դոյզն ձորակաւ զատուցեալ, և յարևմտից լայնարձակ ձորիւ՝ որ այն ինքն է Ծաղկոցաձոր անուանեալն, կամ որպէս այժմ՝ կոչեն Ծաղկաձոր. որոյ սկիզբն 'ի Ծաղկոցի դրանէն առեալ՝ յատակ նորա երթալով երթայ և 'ի խոր յանգեալ դաշտանայ, բաժանեալ անդէն յայլ և այլ թևս, յորոց առաջ մի բողբոջեալ ըզհարաւով արևելից՝ երթեալ միանայ ընդ մեծի և ահաւոր խորածորոյն Ախուրենոյ: Յասացելոցս 'ի յայտ գայ՝ զի յատակ քաղաքին դաշտավայրիւ սկսեալ 'ի հիւսիսոյ՝ ընդ զառիվայր աւարտի 'ի հարաւակողմն. իսկ արևմուտակողմն նորա

միշտ դաշտավայր է մինչև ցրտը սկսում միջնաբերդին՝ որ է 'ի ծայրն հարաւոյ . և պարիսպ կողմանցդ 'ի ծայր ապառաժ քարափանն կառուցեալ, որ 'ի մեծ բարձրութենէն 'ի խորս անդ Մաղկաձորոյն հայի՝ ահեղ իմն և վսեմ տեսարանաւ :

ՊԱՐԻՍՊԻՆ . — Քաղաքն առ հասարակ պարսպապատ է, թէպէտ և բազում ուրեք խաթարեալ, և 'ի հարաւոյ իսպառ հիմնայատակ եղեալ . հիւսիսակողմն որ դիւրամուտ է թշնամւոյն, զի չիք նորա ձոր զառաջեալ՝ այլ կից է միահետ ընդ դաշտին որպէս ասացի, կրկնապարիսպ է և հզօր քան զայլ կողմանս խիտ առ խիտ աշտարակօքն և որմոցն ստուարութեամբ : Ներքին պարիսպ այդր կողման որ միահետ շրջապատեալ է գրաղաքան՝ ձեռակերտ է Սշոտոյ Ողորմածն անուանելոյ, զոր վարդան վկայէ և յայտ է յարձանագրէն որ 'ի վերայ միոյ յաշտարակացն, զորմէ զկնի : Իսկ երկրորդ որ և արտաքին պարիսպն՝ որ 'ի դրանէն Մաղկոցաց սկսեալ մինչև յարևելից կողմն՝ ձեռակերտ է որդւոյ նորա Սմբատոյ Տիեզերակալի : Միջոց կրկին պարսպացդ ոչ աւելի է քան գրասն քայլ, և ուրեք այլ ևս անձուկ : Ներքնոյ պարսպին սակաւ ուրեք խաթարեալ ակներև ցուցանէ զվսեմութիւն մեծագործ ձեռինն՝ 'ի բարձրութենէ խիտ առ խիտ աշտարակացն, և են դռք բոլորչի, սակաւուց և եթ քառակուսի ելով . և 'ի նոսա ոմն կրկնայարկ և այլ ոմն եռայարկ, համակ քարակերտ կամարակապք, քարեղէն սանդղովք առ շրջապատաւ ներքին կողման որմոցն՝ յարկ ընդ յարկի կցորդեալ : Բարձրութիւն պարսպիդ և աշտարակացդ չունի տալ զհաւաստիս ճշգրիտ չափոյ . զի և բարձրագոյնն 'ի նոսա և անարստ թուեցեալ՝ տակաւին քանդեալ է ըստ ծայրիցն : Իսկ արտաքին պարիսպն ուրեք կործանեալ և հողոյ եղեալ հաւասար, և ուրեք կիսով չափ բարձրութեանն և աւելի ևս խաթարեալ է . և որչափ երևին՝ սակաւութիւ են աշտարակք սորա քան զառաջնոյն . և որպէս 'ի վերն ասացի, 'ի Մաղկոցի դրանէն սկսեալ հասանէ մինչև ցկողմն արևելից 'ի սկիզբն ձորակին, չգիտեմ թէ և անտի յառաջ շարայարէր այլ ևս մինչև ցգետեզրն . զի 'ի խառն իխուռն քարակոյտ աւերակացն այնր կողման չերևի որիչ թէ ուր գաղարի հիմն նորա, կամ թէ ոյր են աւերակքն՝ սորա թէ ներքնոյն :

Քարինք պարսպացդ գեղնագոյնք են, կակուղ և առ հասարակ կովածոյ . և չափ մեծութեաննոցա երկթղաչափ քառակուսի . ուրեք ուրեք մանաւանդ 'ի կողմն Մաղկաձորոյն 'ի սեաւ քարանց առ իրեարս եղելոց՝ խաչ երկայնաբուն ձևացուցեալ է 'ի շարս անդ քարանց պարսպին . և ուրեք ևս ընդ ողջոյն երկայնութիւն կրկին պարսպացն, մանաւանդ 'ի վերայ աշտարակաց, քառակուսի կանգնաչափ արձան ազուցեալ 'ի նոյն սեաւ կամ 'ի սպիտակ քարէ, և 'ի նոսա արձանագրութիւնք : Ըստ գեղնագոյն քարանց պարսպացդ, են և քարինք եկեղեցեաց . թէպէտ և 'ի սոսա ոմանք 'ի հասարակ կամ թէ ասել 'ի մթին մոխրագոյն քարանց են կերտեալք, իսկ գեղնագոյնքն ոչ որպէս զպարսպացն բացագոյն են, այլ փոքր մի մթին որ 'ի կարմիր հարկանի : Սակայն կճեայ քար թղաչափ մի չերևի 'ի հոյակապ շինուածս քաղաքին, և չգիտեմ որպէս տեսեալ ճանապարհորդաց ոմանց և հաւատարմացուցեալ և 'ի գիր ևս մուծեալ է :



ԴՐՈՒՆՔՆ . — Հինգ դրունք որիչ երեկին 'ի նախապարիսպն . առաջին յարեւելս , երկրորդն , երրորդն և չորրորդն 'ի հիւսիս , և հինգերորդն որ է դուռն Մաղկոցի՝ յարեւմուտս : Իսկ երկրորդի պարսպին երկու միայն մնացեալ են դրունք հանդէպ երկրորդ և երրորդ դրանցն , ոչ դէմ ընդդէմք այլ փոքր մի յարեւմուտս խոտորեալք : Բարաւորք դրանցն կամարաձեք են անզարդք և պարզք ամենեկն :

ԱՐՁԱՆԱԳԻՐԻՔ ԳԱՐՍԳԱՅՆ . — Պարսպացն արձանագրութիւնք մեծաւ մասամբ 'ի վերայ նախապարսպին են և 'ի վերայ աշտարակաց նորա . այլ 'ի վերայ երկրորդին սակաւ յոյժ . զի որպէս ասացի այս պարիսպ բազում ուրեք հիմնայատակ եղեալ է . և ուր կանն՝ չհասանեն 'ի չափ բարձրութեան արձանագրաց տեղոյ նախապարսպին . յորմէ յայտ է թէ արձանագիրք երկրորդի պարսպին հանդերձ վերնով մասամբն անկեալ են : Արձանագրութիւնք չունին տալ զլիակատար ծանօթութիւն որչափ իղձ լինի հնախոյզ աշխարհագիր , որում ցանկալի է կարեոր հանգամանաց շինուածոյն մանրամասն նկարագիր 'ի նշանաւոր վայրի , որպէս 'ի վերայ դրանց . յորոց 'ի միումն այլ յիշատակարան կայ՝ որ չտայ լոյս հանգամանաց շինութեանն : Եւ դարձեալ բազումք 'ի նոցանէ ոչ անթերի ունին զբանիցն կարգ . զի թէպէտ 'ի կարծր վիմի են քանդակքն , այլ 'ի հնութենէ ժամանակին կիսեղծք են յորովք : Մեծի աշխատութեան պէտք եղեն հաւաքել զնշխարեալ մնացուածս նոցա մինչև ցնշանախեց մի . և ուր իսպառ եղծեալն էր , թէպէտ կարգ բանիցն յայտնէր զիմացուածն , չիշխեցաք յանձնէ տառ մի յաւելուլ 'ի

բանն, կէտանիչ թողեալ զմիջոցն . և զտարազ ուղղագրութեանն ըստ այնց ժա-
մանակաց կամ ըստ չափոյ հմտութեան փորագրողին՝ թողաք այնպէս որպէս
էրն : Երկու ինչ դիտելի են յարձանագիրս պարսպացն . նախ զի թէպէտ նախա-
պարիսպն Աշոտոյ ընծայի, սակայն աշտարակքն այլ և այլ արանց սեփականեալ
են, յորս ստէպ յիշատակի Զաքարիա սպասալար . նմին իրի յայտ է, որպէս ես
կարծեմ, թէ 'ի շինութեան անդ ոմանք 'ի նախարարազանց մասնաւորեալ յին-
քեանս զծախս շինուածոյն՝ զաշտարակն զայնոսիկ յարդիւնս անձանց սեփա-
կանեցին՝ առ անկորուստ մնալոյ յիշատակի անուան նոցա : Կամ առ ճշդիւ իս-
սել, յորժամ մի ըստ միոջէ տիրեցին քաղաքին Յոյնք և Վիրք և Պարսիկք, խա-
թարեալ բրգանցն յանդուլ պատերազմաց, յետ այնորիկ որպէս 'ի թուականէ
նոցա յայտնի երևի՝ վերստին շինեցան 'ի նոցանէ՝ զորոց անուանան ցուցանեն ար-
ձանքն . քանզի որ յայտնի թուականան է՝ չանցանէ 'ի վեր քան զ՝ՈԹ, իսկ յա-
ռաջնում նուագին որ անց քաղաքդ առ Յոյնս, թուականն էր ՆՂԵ : Երկրորդ,
ուր ասի՝ շինեցի զքոչրջևս, այն է բուրգն կամ աշտարակ, իմանալի է ըստ ասա-
ցելումդ . իսկ ուր ասի՝ շինեցի զարձանս, պարտ է իմանալ զխաչաքարն որ կայ
վերոյ նոյն արձանագրին : Արդ նախ զդրանցն արձանագիրսն եղեալ առանձինն,
ապա զայլն կարգեսցուք 'ի Ծաղկոցի դրանէն սկսեալ և 'ի վեր, այն է յարև-
մտից յարևելս :

Ի վերայ միջնոյ դրան նախապարսպին, զոր ես ախորժեմ աւագ դուռն կո-
չել, կայ վէմ մի երեք մեդր երկայնութեամբ այսու արձանագրաւ .

• • • գ.թ.ու.թ.եամբն մարգասիրին եւ անմահ բանին այ եւ վասն
յերկարկենդանութեան արքայից արքային անձադիր փաթ շահին
եւ անձիմաստ իշխանաց իշխանին աշխարհաշէն եւ 'ի թագա-
ւորութեան վրաց աշխարհիս որ եղեւ մայրաքաղաք անի խա-
սինջու Օ եւ 'ի տէրութեան քաղաքիս անձասէր պատրոնացն
գրիգոր աղին եւ յովաննիսի եւ յեպիսկոպոսութեան տէր յո-
հաննիսի ողորմածն անձ հայեցաւ 'ի դժուարութիւն քաղա-
քիս եւ խորհուրդ բարի ծագեց 'ի սիրտս պարոնացն գրի եւ-
յով : որ զքաղաքս մեր նորոգել շինեցին եւ զամենայն հար-
կապահանջութիւն եբարձին զմ • • եւ զթաղառ զհեծել
զղսփչուն զախարթամարն եւ զդունագիրն 'ի բաժ Օ 'ի դաղմս
եւ 'ի մուսայիսն դարձուցին եւ զաթուին հարկն որ յետո
'ի չարաց դրած էր զկապալն յեպիսկոպոսէն բարձին եւ յա-
ռաջին սահմ • • • • •

Յարձանագիրդ թէպէտ և ընդ այլ բանից խանգարեալ է թուականն, սակայն
յանուանցն երևի՝ թէ յետ անցանելոյ տէրութեան քաղաքին 'ի ձեռս օտար ազ-
գաց գրեալ է . յորժամ նախնի հարստութեանն կորուսեալ պէսպէս հարկապա-

հանջութեամբ կեղեքէին զժողովուրդն . որում փոքր մի դիւր առնել խորհեցեալ կրկին պարոնայքն Գրիգոր և Յովհաննէս , ոստիկանք որպէս կարծեմ 'ի կողմանէ օտարագլուոյն կացեալք 'ի քաղաքին , բարձին զայն ամենայն , յառաջին սահման հանեալ որպէս էր առ Բագրատունի թագաւորօք :

Յաջմէ դրանդ անընդմիջաբար ստորև աշտարակին ագուցեալ կան յորմն երեք մեծամեծ խաչաքարք 'ի կարմիր քարանց գեղեցկաբանդակք : Իսկ յահեկէ դրանն զկնի առաջնոյ աշտարակին յեռեալ է 'ի պարսպին բարձրաքանդակ պատկեր մեծ առիւծու 'ի վէմ մի քառակուսի . և յահեկէ նորա 'ի վերայ երկրորդի աշտարակին արձանագիր տաճկերէն քիւֆի գրով ծաղկազարդ :

Ի վերայ երկրորդի դրանն որ յաջմէ է նախագրեւոյդ չիք արձանագիր . այլ 'ի վերայ աշտարակին որ յաջմէ նորա է՝ կայ խաչաքար մի յորոյ 'ի վերին եզերն է գրեալ

Չսարգիս յիշեցէք

և 'ի ներքին եզերն այսպէս

սք սարգիս աւգնէ սարգսի գէորգա ամէն

Իսկ ստորև խաչաքարին սպիտակ քար արձանագրաւս .

'ի Թուիս ՈԿԴ կամաւք ողորմածին քի 'ի պետութեանս մանդատոր Թախուցէս ամիր սպասաւար շահնշահ զաքարեալի որդ . . շահնշահ սարգսի ես սարգիս որդի սամուէլի ծառայ քի 'ի հալալ վաստկոց իմոց շինեցի զարձանս 'ի յիշատակ ինձ եւ ծնողաց եւ զաւակաց մերոց որք կարդայք յիշեցէք զմեզ 'ի քն

Ի ստորև աշտարակիդ գետնոյ հաւասար խորշ կայ քանդակագործ շուրջանակի , այլ մէջ նորա դատարկ . Թուի խաչ լինել 'ի նմա յառաջագոյն կամ պատկեր :

Արդ դարձ արարեալ յարեմուտս , 'ի Ծաղկոցի դրանէն և 'ի վեր յարեւել կոյս 'ի նմին պարսպին և յարտաքնումն այս արձանագիրք կան . յորոց առաջինն 'ի վերայ աշտարակի որ 'ի վերայ քարափանն է , առ որով ձորամէջն սկսանի Ծաղկածորոյն .

'ի ՈԹ ԹԼ 'ի Թագաւորութեանն փատչնոյ 'ի հայրապետութեանն սք բարսղի ես աբրահամ շինեցի զբուրջս 'ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց որք կարդայք զիս եւ զծնողս իմ եւ զառաքեալ վարդապետ յաղաւթս յիշեալիք

Անտի 'ի վեր յայլում աշտարակի .

'ի ԹԼ ՈԿԴ շնորհիւն քի 'ի տէրութեանս մանդատոր Թա

խուցէս ամիր սպասաւար շահնշահ սարգսի ես մխիթարիչս
գանձակեցի ծառայ քի՛ ՚ի յարդար վաստակոց արրահամու եղ-
բաւր իմոյ շինեցի զարձանս վասն փրկութեան հոգւո նորա
եւ յիշատակի մեզ եւ ճնողաց մերոց որք կարդայք յիշեցէք
զարրահամ ՚ի քս յս

Անտի ՚ի վեր յայլում աշտարակի .

՚ի Թւ ՈԾԷ շնորհիւն անյ ՚ի տէրութեան մանգատոր Թախու-
ցէս . . . սպասաւար շահնշահ զաքարի ես սարգ . . . որդ . . . ծա-
ռա քի շի . . . անս վասն փրկութեան . . . րն . . . մին եւ զաշ-
խատ . . .

Յաշտարակին որ է հանդէպ վերջնոյ դրանն խցելոյ աւերակօք .

՚ի ՈԿԱ զաւրութեամբն քի ես մանգատոր Թախուցէս ամիր
սպասաւար շահնշահի զաքարիա շինեցի զարձանս վասն արեւ-
շատութեան մեզ եւ որդւոց իմոց

Անտի ՚ի վեր ՚ի միում բարձր աշտարակի ՚ի վերայ քարանց նորա փորագրեալ
կանգնաչափ ՚ի վեր ՚ի դեմնոյ բուն արձանագիր ներքնապարսպին համառօտ և
հնագոյն քան զամենեսին .

աշտոոյ իշխանաց իշխանի է

Անտի ՚ի վեր յայլում աշտարակի .

՚ի ՈԿԵ Թու շնորհիւն քի ՚ի տէրութեանս մանգատոր Թա-
խուցէս ամիր սպասաւար շահ որք կարդացք աղաչեմք
զմեզ յիշեցէք ՚ի քս յս ՚ի տր մեր սիմէոն

Անտի ՚ի վեր երկու աշտարակք կան օձապատ քանդակօք , սյլոց աշտարակաց ՚ի
մէջ անկանելով . և են օձապատրդ ոչ յոյժ բարձր , և քարեայ վիշապքն երկու
՚ի պարսպէն սկսեալ պատեալ են զաշտարակն դլուխ առ գլուխ եկեալ . և ՚ի
միջի՛ միոյն՝ գլուխ եզին զոր կամին կլանել , և միւսոյն՝ այլ զարդ . երկոցուն ար-
ձանագիր միօրինակ է սյսպէս .

՚ի Թվիս : ՈԿԷ կամաւքն անյ ես շանուշս կենակից խաչերե-
սին անդարձով խաչերեսին շինեցի զբուրջնս յիշատակ մեզ
Յարևելակողմն պարսպին .

՚ի ՈԿԸ Թւ շնորհիւն քի ես մամ խաթունս դուստր խաչե-
րեսին լաւուեցո անժամ ՚ի քս գնացի յիմ հաւրն ՚ի հո

ամին որ ինչ տուեալ էք . . . անյիշատակ էի շինեցի զբուրջնս
յիշատակ ինձ . . . աղաչեմ որ կարդայք մեզ թող . . .

Անտի 'ի վեր յայլում աշտարակի .


Թու . . . կամաւն այ լուսորս սրդի գրիգորո շինեցի զարձանս
յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ յարեւշատութիւն շահրն-
շահի սպարապետի եւ յամիրաութեան վահրամա կատարե-
ցաւ բուրջս . տր' անձ ողորմեա լուսորին ամէն

Անտի 'ի վեր յայլում աշտարակի .

✠ 'ի ՈՅԷ Թւ շնորհիւն քի ես մանդատոր Թախուցէս ա-
միր սպասալար շահնշահ զաքարիա շինեցի զարձանս եւ զպա-
րիսպս վասն յիշատակի մեզ եւ ծնողաց մերոց

ի նոյն կողմն կային և այլ ևս երկու արձանադիրք առնթեր միմեանց , այլ առ
յոյժ բարձրութեանն մնացին անվերժանելի :

ՔԱՂԱՔԱՄԷՋՆ . — Ընդ հիւսիսային դրունսն , զի այն է արահետ ճանապարհ ,
մտեալ 'ի ներքս , պատկերանայ յանդիման քաղաքադաշտն անապատացեալ չա-
փաւոր մեծութեամբ . զի ընդ ամենայն երկայնութիւն նորա յարեւլից յարե-
մուտս հազիւ տւէ քառորդ մի ժամու . ամենայն ուրեք լի է քարակոյտ աւերա-
կօք . առ հասարակ կործանեալ են տունքն մինչև չմնալոյ 'ի նոցանէ և ոչ մի .
այլ քառակուսի ձև նոցին երևի զերեսօք դետնոյն՝ ուր 'ի կործանելոյ քարանցն
անարգել իցէ . զի շատք են որոց հազիւ միոյ յանկեանցն երևելի եղեալ՝ միւս
կողմանքն քարակուտիւ ծածկեալ են : Թանձրութիւն որմոց նոցա աւելի քան
զկէս մեղրաչափ է , առ հասարակ քարակերտք , աղիւսակերտ և ոչ մի . և ազգ
քարանցն սևադոյն և հասարակ , մանր և անտաշ : Զայդ ասեմ որպէս ինչ մնա-
ցեալ են յաւուր յայսմիկ . զի ըստ վկայելոյ ժամանակակից յիշատակարանաց
հոյակապք էին շինուածք տանցն . և ոսկեզօծ պալատից մեծամեծացն 'ի հարկէ
չվայելէր մանր և անտաշ քարանց 'ի հիւսուած որմոցն . սակայն յետ կործանելոյ
դոցին օր ըստ օրէ բարձին անտի զմեծամեծս և զպատուականս 'ի քարանց շրջա-
կայ բնակիչքն . զոր օրինակ առնեն մինչև ցայսօր : Այլ զաւերակացդ և այլուր
խօսեացուք . առ տեղեալս լիցի մեզ ստորագրել զանկործան շինուածս քաղաքին :



ԶՎԱՐՏՆՈՔ

ՇԻՐՈՒՆ

ԵՐԱՍՄԱՆՈՐ

Հ Ա Ն Ա Ն Գ

Ա Ր Ա Յ Ե Ի

Կ Յ Ա Ն Գ Ի

Հ ի Ն Զ ա ն կ ի խ ա յ

Գ Ր Ա Յ Ե Ի

Գ Ր Ա Յ Ե Ի

Ե Ղ Ա Գ Թ